**Հավելված 7**[26]
**«--ԼՄԱՀ--ԲՄԱՇՁԲ-21--/-1--»* ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

# ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «--ԼՄԱՀ--ԲՄԱՇՁԲ-21--/-1--»

ք. Ալավերդի «17» 08 2021թ.

«__Ալավերդու համայնքապետարան__», ի դեմս –համայնքապետ Սասուն Խեչումյան -ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Փայլք>>-ՍՊԸ--ն, ի դեմս տնօրեն Տ.Արշակյանի---ի, որը գործում է -<<Փայլք>>-ՍՊԸ -ի--- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված *Համայնքի Ալավերդի,Հաղպատ և Աքորի բնակավայրերի հենապատերի ու ճեմուղիների վերանորոգման աշխատանքներ* (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ _Օգոստոսի 23-ից_ 120 օր_:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

---

[26] *Սույն հավելվածը հրավերից հանվում է, եթե գնման առարկա չեն հանդիսանում շինարարական աշխատանքները:*

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _5_ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 141996000 (հարյուր քառասունմեկ միլիոն ինը հարյուր իննիսունվեց հազար) ՀՀ դրամ, որից -23666000- (--քսաներեք միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար-) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5, N 5.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Զորավար Անդրանիկի 8/1 | «Փայլք» ՍՊԸ |
| Ալավերդու համայնքապետարան | ք. Տաշիր, Վան 1 |
| ՀՀ ֆինանսների Նախարարության | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Գործառնական Վարչություն | Հ/Հ 1150020591901961 |
| հ/հ 900262000707 | ՀՎՀՀ 06948686 |
| ՀՎՀՀ 06954208 | |
| Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան | |
| --------------------------------- | ----------------- Տ. Արշակյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված թիվ 1
« 17 » 08 2021թ. կնքված
«ԼՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Համայնքի Ալավերդի,Հաղպատ և Աքորի բնակավայրերի հենապատերի ու ճեմուղիների վերանորոգման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| NN | գնի հիմք | Աշխատանքի նկարագիրը | Չ/մ | Քանակ | Միավ. գինը հազար դրամ | Ընդամենը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6,000 | |
| | | ***<u>Աքորի համայնքի հենապատերի վերանորոգում</u>*** | | | | |
| 1 | июн.21 | հենապատերի տակ առանձին տեղերում հիմքերի կառուցում B-7,5 մակնիշի խամքարաբետոնով | $մ^3$ | 4,5 | 41,858 | 188,36 |
| 2 | 08.апр | պատի շարվածքի վերականգնում խամքարից | $մ^3$ | 36,15 | 27,368 | 989,34 |
| | | **Աքորի համայնքի Ճեմուղիների վերանորոգում** | | | 0,000 | 0,00 |
| 1 | 27-33 | Ա/բետոնե ծածկույթի քանդում | $մ^3$ | 50,6 | 4,482 | 226,81 |
| 2 | 1-1593 | Խճի հիմնատակի քանդում բարձելով ա/ինքնաթափին | $1000մ^3$ | 0,1685 | 723,022 | 121,83 |
| 3 | май.64 | Ավազի շերտ միջին խոշորության 100մմ /ցեմենտի խառնումով 1մ2-ում 3 կգ/ | $մ^3$ | 168,52 | 6,743 | 1136,33 |
| 4 | շուկա | ցեմենտի արժեքը | տն | 5,054 | 49,947 | 252,43 |
| 5 | 5-111 | Ճեմուղու ծածկույթ մոխրագույն բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ ց/ա շաղախով | $մ^2$ | 842,3 | 6,263 | 5275,73 |
| 6 | 5-111 | Ճեմուղու ծածկույթ գունավոր բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ ց/ա շաղախով | $մ^2$ | 842,3 | 6,788 | 5717,48 |
| 7 | շուկա | կարերի ց/ա շաղախ | $մ^3$ | 10,14 | 39,559 | 401,13 |
| 8 | 11.ноя | սալիկների եզրագծի կառուցում B -12.5 մակնիշի շաղախով | $մ^3$ | 2,43 | 44,319 | 107,69 |
| 9 | 1-1592 | քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | $1000մ^3$ | 0,0506 | 537,318 | 27,19 |
| 10 | Գ-130- | քանդված ա/բետոնի և խճի տեղափոխում ավտոինքնաթափով 10կմ հեռ. | տն | 468,24 | 2,364 | 1106,70 |
| | | ***<u>Հաղպատ համայնքում հենապատերի</u>*** | | | | |
| | | ***<u>վերանորոգում</u>*** | | | | |
| 1 | | **գերեզմանների ներքևի փողոցի դեպի ներքև տանող ճանապարհահատվածի հենապատեր** | | | | |
| 2 | 1-961 | շրջակայքի և հիմքերի բնահողի քանդում ձեռքով | $մ^3$ | 122,6 | 2,697 | 330,68 |
| 3 | 1-968 | բնահողի հետլիցք ձեռքով | $մ^3$ | 4,57 | 1,118 | 5,11 |
| 4 | 1-1592 | ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին մեխանիզմով | $1000մ^3$ | 0,118 | 537,318 | 63,40 |
| 5 | Գ-130-5 | ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ. | տն | 177,05 | 1,567 | 277,50 |
| 6 | 11.июн | հենապատերի հիմքի խճի նախաշերտ 100մմ | $մ^3$ | 21,75 | 15,241 | 331,50 |
| 7 | июн.21 | հենապատերի հիմքի կառուցում B-7,5 մակնիշի խամքարաբետոնով | $մ^3$ | 26,33 | 41,901 | 1103,26 |
| 8 | июн.90 | հենապատերի իրականացում բետոնով B 12,5 մ.բ. | մ3 | 72,04 | 49,877 | 3593,15 |
| 9 | июн.90 | գլխամասերի և ճակատների հարթեցվում B 12,5 մակնիշի ց/ավազյա շաղախով 50մմ հաստ. | մ3 | 3,65 | 50,140 | 183,01 |
| | | | | | | 0,00 |
| | | | | | | 0,00 |
| | | | | | | 0,00 |
| 10 | շուկա | դրենաժի պոլիպրոպիլենային խողովակներ Φ40/15սմ և 30 սմ երկարության/ | մ | 30,1 | 0,962 | 28,96 |
| 11 | շուկա | խարսխաձողեր Φ 8A240 ամրանից | կգ | 243,2 | 0,583 | 141,88 |
| | | ***<u>Ալավերդիհամայնքում հենապատերի և</u>*** | | | 0,00 | 0,00 |
| | | ***<u>Ճեմուղիների կառուցում</u>*** | | | 0,00 | 0,00 |
| | | **Հիվանդանոցի հենապատ** | | | | 0,00 |
| 1 | мар.78 | ,,քրքատաշ,, շարվածքով երեսպատված բազալտ քարի իրականացում h=300մմ | $մ^2$ վերանորոգվող մակերես | 25 | 32,311 | 807,78 |
| 2 | 7-733 | բազալտե գլխաքարի տեղադրում 300x150մմ /գոյություն ունեցող/ | 100 գծմ | 0,25 | 210,261 | 52,57 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 0,00 |
| | | Զորավար Անդրանիկի փողոցի հենապատ | | | | |
| 1 | 23-143 գ-0.5 | քարերի թիկունքային մասի բետոնե ելուստների քանդում | մ$^3$ | 0,48 | 4,675 | 2,24 |
| 2 | мар.78 | ,,քրքատաշ,, շարվածքով երեսապատված բազալտ քարի իրականացում h=300մմ | մ$^2$ վերանորոգող մակերես | 4,8 | 32,311 | 155,09 |
| 3 | 7-733 | բազալտե գլխաքարի տեղադրում 250x150մմ /գոյություն ունեցող/ | 100 գծմ | 0,75 | 210,261 | 157,70 |
| 4 | 1-968 | շին աղբի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ$^3$ | 0,48 | 1,118 | 0,54 |
| 5 | Գ-130-10 | շին աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 10կմ հեռ. | տն | 0,864 | 2,364 | 2,04 |
| | | Զորավար Անդրանիկի փողոցի ճեմուղիներ | | | | 0,00 |
| 1 | 27-33 | Ա/բետոնե ծածկույթի քանդում | մ$^3$ | 66,2 | 4,482 | 296,73 |
| 2 | 1-1593 | Խճի հիմնատակի քանդում բարձելով ա/ինքնաթափին | 1000մ$^3$ | 0,2207 | 723,022 | 159,57 |
| 3 | 27-36 | գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում բետոնե հիմքի հետ միասին | մ | 62 | 1,079 | 66,89 |
| 4 | 27-87 | բացակայող բազալտե եզրաքարերի տեղադրում /գոյություն ունեցող/բետոնե հիմքի վրա B 15 դասի | 100 գծմ | 0,62 | 397,078 | 246,19 |
| 5 | май.64 | Ավազի շերտ միջին խոշորության 100մմ /ցեմենտի խառնումով 1մ2-ուն 3 կգ/ | մ$^3$ | 220,84 | 6,743 | 1489,12 |
| 6 | շուկա | ցեմենտի արժեքը | տն | 6,625 | 49,947 | 330,90 |
| 7 | 5-111 | ճեմուղու ծածկույթ մոխրագույն բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ ց/ա շաղախով | մ$^2$ | 1103,8 | 6,263 | 6913,64 |
| 8 | 5-111 | ճեմուղու ծածկույթ գունավոր բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ ց/ա շաղախով | մ$^2$ | 1103,8 | 6,788 | 7492,53 |
| 9 | շուկա | կարերի ց/ա շաղախ | մ$^3$ | 13,25 | 39,559 | 524,15 |
| 10 | 11.ноя | սալիկների եզրագծի կառուցում B -12.5 մակնիշի շաղախով | մ$^3$ | 2,8 | 44,319 | 124,09 |
| 11 | июн.21 | ճեմուղու կողային քանդված մասի հիմքի վերականգնում B-7,5 մակնիշի խամքարաբետոնով | մ$^3$ | 3,6 | 41,901 | 150,85 |
| 12 | июн.91 | ճեմուղու կողային քանդված մասի հենապատի վերականգնում B-12,5 խամքարաբետոնով | մ$^3$ | 14,32 | 44,029 | 630,50 |
| 13 | 27-79 | ծառերի բների շուրջ բետոնե եզրաքարերի տեղադրում 200 x 60մմ բետոնե հիմքի վրա | գծմ | 122,4 | 7,745 | 947,98 |
| 13 | 1-968 | քանդված եզրաքարերի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ$^3$ | 2,79 | 1,118 | 3,12 |
| | | | | | | 0,00 |
| | | | | | | 0,00 |
| | | | | | | 0,00 |
| 14 | Գ-130-2 | քանդված եզրաքարերի տեղափոխում պահեստավորման ավտոինքնաթափով 2կմ հեռ. | տն | 5,58 | 1,040 | 5,80 |
| 15 | 1-968 | քանդված եզրաքարերի շին աղբի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ$^3$ | 1,86 | 1,118 | 2,08 |
| 16 | Գ-130-10 | քանդված եզրաքարերի շին աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 10կմ հեռ. | տն | 3,35 | 2,364 | 7,92 |
| 17 | 1-1592 | քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0,0662 | 537,318 | 35,57 |
| 18 | Գ-130-10 | քանդված ա/բետոնի և խճի տեղափոխում ավտոինքնաթափ -ով 10կմ հեռ. | տն | 573,8 | 2,364 | 1356,20 |
| | | Թումանյան փողոցի հենապատ | | | | 0,00 |
| 1 | июн.21 | հենապատերի հիմքի կառուցում B-7,5 մակնիշի խամքարաբետոնով | մ$^3$ | 20,3 | 41,901 | 850,60 |
| 2 | 23-143 գ-0.5 | քարերի թիկունքային մասի բետոնե ելուստների քանդում | մ$^3$ | 2,6 | 4,675 | 12,16 |
| 3 | мар.78 | ,,քրքատաշ,, շարվածքով երեսապատված բազալտ քարի իրականացում h=300մմ | մ$^2$ վերանորոգող մակերես | 3,7 | 32,311 | 119,55 |
| 4 | 7-733 | բազալտե գլխաքարի տեղադրում 250x150մմ /գոյություն ունեցող/ | 100 գծմ | 1,12 | 210,261 | 235,49 |
| 5 | 1-968 | շին աղբի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ$^3$ | 2,6 | 1,118 | 2,91 |
| 6 | Գ-130-10 | շին աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 10կմ հեռ. | տն | 4,68 | 2,364 | 11,06 |
| | | Թումանյան փողոցի ճեմուղիներ | | | | 0,00 |
| 1 | 27-33 | Ա/բետոնե ծածկույթի քանդում | մ$^3$ | 150,4 | 4,482 | 674,14 |
| 2 | 1-1593 | Խճի հիմնատակի քանդում բարձելով ա/ինքնաթափին | 1000մ$^3$ | 0,5012 | 723,022 | 362,38 |
| 3 | 1-1592 | քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0,1504 | 537,318 | 80,81 |
| 4 | Գ-130-10 | քանդված ա/բետոնի և խճի տեղափոխում ավտոինքնաթափ -ով 10կմ հեռ. | տն | 1303,2 | 2,364 | 3080,17 |
| 5 | 27-36 | գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում բետոնե հիմքի հետ միասին | մ | 55 | 1,079 | 59,34 |
| 6 | 27-87 | բացակայող բազալտե եզրաքարերի տեղադրում /գոյություն ունեցող/բետոնե հիմքի վրա B 15 դասի | 100 գծմ | 0,55 | 397,078 | 218,39 |
| 7 | май.64 | Ավազի շերտ միջին խոշորության 100մմ /ցեմենտի խառնումով 1մ2-ուն 3 կգ/ | մ$^3$ | 501,5 | 6,743 | 3381,61 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | շուկա | ցեմենտի արժեքը | տն | 15,045 | 49,947 | 751,45 |
| 9 | 5-111 | ճեմուղու ծածկույթ մոխրագույն բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ ց/ա շաղախով | մ² | 2506,9 | 6,263 | 15701,93 |
| 10 | 5-111 | ճեմուղու ծածկույթ գունավոր բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ ց/ա շաղախով | մ² | 2506,9 | 6,788 | 17016,69 |
| 11 | շուկա | կարերի ց/ա շաղախ | մ³ | 30,07 | 39,559 | 1189,53 |
| 12 | 11.ноя | սալիկների եզրագծի կառուցում B -12.5 մակնիշի շաղախով | մ³ | 5 | 44,319 | 221,59 |
| 13 | 27-79 | ծառերի բների շուրջ բետոնե եզրաքարերի տեղադրում 200 x 60մմ բետոնե հիմքի վրա | գծմ | 163,2 | 7,745 | 1263,98 |
| 14 | 1-968 | քանդված եզրաքարերի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ³ | 2,48 | 1,118 | 2,77 |
| 15 | Գ-130-2 | քանդված եզրաքարերի տեղափոխում պահեստավորման ավտոինքնաթափով 2կմ հեռ. | տն | 4,96 | 1,040 | 5,16 |
| 16 | 1-968 | քանդված եզրաքարերի շին աղբի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ³ | 1,65 | 1,118 | 1,84 |
| 17 | Գ-130- | քանդված եզրաքարերի շին աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 10կմ հեռ. | տն | 2,98 | 2,364 | 7,04 |
| | | **Սպանդարյան փողոցի բազալտե գլխաքարեր** | | | | 0,00 |
| 1 | 7-733 | Սպանդարյան փողոցի բազալտե գլխաքարի տեղադրում 250x150մմ/գոյություն ունեցող/ | 100 գծմ | 0,5 | 210,261 | 105,13 |
| | | **Սանահին կայարան թաղամասի փողոցի ճեմուղիներ** | | | | 0,00 |
| 1 | 1-961 | եզրաքարերի հիմքերի բնահողի քանդում ձեռքով | մ³ | 4,84 | 2,697 | 13,05 |
| 2 | 1-968 | քանդված բնահողի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ³ | 4,84 | 1,118 | 5,41 |
| 3 | Գ-130-5 | ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ. | տն | 7,26 | 1,567 | 11,38 |
| 4 | 27-79 | հավաքովի բետոնե եզրաքա-րերի տեղադրում 200 x 80մմ բետոնե հիմքի վրա B 15 դասի | գծմ | 173 | 6,122 | 1059,04 |
| 5 | май.64 | Ավազի շերտ միջին խոշորության 100մմ /ցեմենտի խառնումով 1մ2-ում 3 կգ/ | մ³ | 25,9 | 6,743 | 174,64 |
| 6 | շուկա | ցեմենտի արժեքը | տն | 0,7788 | 49,947 | 38,90 |
| 7 | 5-111 | ճեմուղու ծածկույթ մոխրագույն բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ ց/ա շաղախով | մ² | 129,8 | 6,263 | 813,00 |
| 8 | 5-111 | ճեմուղու ծածկույթ գունավոր բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ ց/ա շաղախով | մ² | 129,8 | 6,788 | 881,07 |
| 9 | շուկա | կարերի ց/ա շաղախ | մ³ | 1,6 | 39,559 | 63,29 |
| | | **Բաղրամյան թաղամասի հենապատ** | | | | 0,00 |
| 1 | 1-961 | աստիճանների և հենապատերի հիմքերի և պատերի բնահողի մաքրում ձեռքով | մ³ | 15,43 | 2,697 | 41,62 |
| 2 | 23-143 գ-0.5 | քարերի թիկունքային մասի բետոնե ելուստների քանդում | մ³ | 0,3 | 4,675 | 1,40 |
| 3 | июн.21 | հենապատերի հիմքի կառուցում B-7,5 մակնիշի խամքարաբետոնով | մ³ | 1,68 | 41,901 | 70,39 |
| 4 | июн.91 | գոյություն ունեցող հենապատի վերականգնում B-12,5 բուտա- բետոնով | մ³ | 0,3 | 44,022 | 13,21 |
| 5 | июн.91 | նոր կառուցվող հենապատի թիկունքային մասի B-12,5 բուտա- բետոնով | մ³ | 2,26 | 44,029 | 99,51 |
| 6 | мар.78 | ,,քրքատաշ,, շարվածքով երեսապատված բազալտ քարի վերականգնում h=300մմ | մ² վերանորոգող մակերես | 5,95 | 32,311 | 192,25 |
| 7 | 7-733 | բացակայող և նոր բազալտե գլխաքարեր տեղադրում 200x120մմ/գոյություն ունեցող/ | 100 գծմ | 1,278 | 210,261 | 268,71 |
| 8 | ноя.55 | Ց/ա հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ. աստիճանների տակ | 100մ² | 0,066 | 150,539 | 9,94 |
| 9 | 7-733 | բետոնե աստիճանների տեղադրում բետոնե հիմքի վրա/1100x310x170/ | 100 գծմ | 0,22 | 959,473 | 211,08 |
| 10 | 1-968 | շին աղբի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ³ | 15,43 | 1,118 | 17,25 |
| 11 | Գ-130-10 | շին աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 10կմ հեռ. | տն | 24,7 | 2,364 | 58,38 |
| | | **Գայի փողոց/Սանահին- Սարահարթ թաղամաս/** | | | | 0,00 |
| | | ***Գայի և Պղնձագործների փողոցների միացման հատված*** | | | | 0,00 |
| 1 | 46-188 գ-0.4 | անցքերի շաղափում բետոնի մեջ Φ18,L-150մմ առաջին հավաքովի աստիճանի կապի համար | 100 հատ | 0,24 | 121,225 | 29,09 |
| 2 | Շուկա | խարիսխների տեղադրում L-150մմ, Φ16, 24 հատ | կգ | 5,7 | 0,599 | 3,42 |
| 3 | 1-961 | աստիճանների հիմքերի բնահողի փորում ձեռքով | մ³ | 0,52 | 2,697 | 1,40 |
| 4 | 11.фев | Բնահողի տոփանում խճով | 100մ² | 0,05 | 35,616 | 1,78 |
| 5 | շուկա | անրանային ցանցի տեղադրում Φ 8A240 ամրանից | կգ | 17,4 | 0,583 | 10,15 |
| 6 | 11.ноя | Բետոնե նախապատրաս-տական շերտ աստիճանների տակ B 7.5 մ.բ. | մ³ | 0,52 | 42,492 | 22,10 |
| 7 | ноя.55 | Ց/ա հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ. աստիճանների տակ | 100մ² | 0,05 | 150,539 | 7,53 |
| 8 | 7-733 | բազալտե աստիճանների տեղադրում 300x150մմ/12 հատ/ | 100գծմ | 0,132 | 1071,855 | 141,48 |
| 9 | 1-968 | ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ³ | 0,52 | 1,118 | 0,58 |
| 10 | Գ-130-5 | բնահողի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ. | տն | 0,78 | 1,567 | 1,22 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *Գայի փողոցի ճեմուղիներ* | | | | 0,00 |
| 1 | 27-33 | Ա/բետոնե ծածկույթի քանդում | մ$^3$ | 29,7 | 4,482 | 133,13 |
| 2 | 1-1593 | Խճի հիմնատակի քանդում բարձելով ա/ինքնաթափին | 1000մ$^3$ | 0,1187 | 723,022 | 85,82 |
| 3 | 1-961 | եզրաքարերի հիմքերի բնահողի քանդում ձեռքով | մ$^3$ | 13,38 | 2,697 | 36,09 |
| 4 | 1-968 | ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ$^3$ | 13,38 | 1,118 | 14,96 |
| 5 | Գ-130-5 | ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ. | տոն | 20,07 | 1,567 | 31,46 |
| 6 | 27-79 | հավաքովի բետոնե եզրաքա-րերի տեղադրում 200 x 80մմ բետոնե հիմքի վրա B-15 դասի | գծմ | 481 | 6,122 | 2944,51 |
| 7 | 1-1592 | քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0,0297 | 537,318 | 15,96 |
| 8 | Գ-130-10 | քանդված ա/բետոնի և խճի տեղափոխում ավտոինքնաթա -փով 10կմ հեռ. | տոն | 296,8 | 2,364 | 701,50 |
| 9 | май.64 | Ավազի շերտ միջին խոշորության 100մմ /ցեմենտի խառնումով 1մ2-ում 3 կգ/ | մ$^3$ | 114,16 | 6,743 | 769,78 |
| 10 | շուկա | ցեմենտի արժեքը | տոն | 3,425 | 49,947 | 171,07 |
| 11 | июн.91 | ճեմուղու կողային քանդված հենապատի վերականգնում B-12,5բուտաբետոնով | մ$^3$ | 8,1 | 44,029 | 356,64 |
| 12 | 5-111 | ճեմուղու ծածկույթ մոխրագույն բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ g/ա շաղախով | մ$^2$ | 570,8 | 6,263 | 3575,20 |
| 13 | 5-111 | ճեմուղու ծածկույթ գունավոր բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ g/ա շաղախով | մ$^2$ | 570,8 | 6,788 | 3874,56 |
| 14 | շուկա | կարերի g/ա շաղախ | մ$^3$ | 6,8 | 39,559 | 269,00 |
| 15 | 27-79 | ծառերի բների շուրջ բետոնե եզրաքարերի տեղադրում 200 x 60մմ բետոնե հիմքի վրա | գծմ | 96 | 7,745 | 743,51 |
| 16 | 11.ноя | սալիկների եզրագծի կառուցում B -12.5 մակնիշի շաղախով | մ$^3$ | 1,2 | 44,319 | 53,18 |
| | | *Շահումյան փողոցի ճեմուղիներ* | | | | 0,00 |
| 1 | 27-36 | գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում բետոնե հիմքի հետ միասին | մ | 112 | 1,079 | 120,83 |
| 2 | 27-87 | բացակայող բազալտե եզրաքարերի տեղադրում 150x300/գոյություն ունեցող/ բետոնե հիմքի վրա B15 դասի | 100 գծմ | 1,12 | 397,078 | 444,73 |
| 3 | 27-33 | Ա/բետոնե ծածկույթի քանդում | մ$^3$ | 12 | 4,482 | 53,79 |
| 4 | 1-1593 | Խճի հիմնատակի քանդում բարձելով ա/ինքնաթափին | 1000մ$^3$ | 0,0482 | 723,022 | 34,85 |
| 5 | 1-1592 | քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0,012 | 537,318 | 6,45 |
| 6 | Գ-130- | քանդված ա/բետոնի և խճի տեղափոխում ավտոինքնաթա -փով 10կմ հեռ. | տոն | 120,4 | 2,364 | 284,57 |
| 7 | 1-968 | քանդված եզրաքարերի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ$^3$ | 5,04 | 1,118 | 5,63 |
| 8 | Գ-130-2 | քանդված եզրաքարերի տեղափոխում պահեստավորման ավտոինքնաթափով 2կմ հեռ. | տոն | 4,96 | 1,040 | 5,16 |
| 9 | 1-968 | քանդված եզրաքարերի շին աղբի բարձում ա/ինքնաթափին ձեռքով | մ$^3$ | 8,4 | 1,118 | 9,39 |
| 10 | Գ-130- | քանդված եզրաքարերի շին աղբի տեղափոխում ավտոինքնաթափով 10կմ հեռ. | տոն | 15,1 | 2,364 | 35,69 |
| 11 | май.64 | Ավազի շերտ միջին խոշորության 100մմ /ցեմենտի խառնումով 1մ2-ում 3 կգ/ | մ$^3$ | 46,31 | 6,743 | 312,27 |
| 12 | շուկա | ցեմենտի արժեքը | տոն | 1,39 | 49,947 | 69,43 |
| 13 | 5-111 | ճեմուղու ծածկույթ մոխրագույն բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ g/ա շաղախով | մ$^2$ | 231,57 | 6,263 | 1450,44 |
| 14 | 5-111 | ճեմուղու ծածկույթ գունավոր բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ g/ա շաղախով | մ$^2$ | 231,57 | 6,788 | 1571,88 |
| 15 | շուկա | կարերի g/ա շաղախ | մ$^3$ | 2,78 | 39,559 | 109,97 |
| 16 | 11.ноя | սալիկների եզրագծի կառուցում B -12.5 մակնիշի շաղախով | մ$^3$ | 0,64 | 44,319 | 28,36 |
| | | *Միկոյան փողոցի ճեմուղիներ* | | | | 0,00 |
| 1 | 1-968 | գոյություն ունեցող բնահողի մաքրում ձեռքով բարձելով ա/ինքնաթափին | մ$^3$ | 39,55 | 1,118 | 44,21 |
| 2 | Գ-130-5 | ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ. | տոն | 59,3 | 1,567 | 92,95 |
| 3 | 27-33 | Ա/բետոնե ծածկույթի քանդում | մ$^3$ | 21,5 | 4,482 | 96,37 |
| 4 | 1-1593 | Խճի հիմնատակի քանդում բարձելով ա/ինքնաթափին | 1000մ$^3$ | 0,0812 | 537,318 | 43,63 |
| 5 | 1-1592 | քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ$^3$ | 0,0215 | 537,318 | 11,55 |
| 6 | Գ-130- | քանդված ա/բետոնի և խճի տեղափոխում ավտոինքնաթա -փով 10կմ հեռ. | տոն | 205,5 | 2,364 | 485,71 |
| 7 | май.64 | Ավազի շերտ միջին խոշորության 100մմ /ցեմենտի խառնումով 1մ2-ում 3 կգ/ | մ$^3$ | 79,03 | 6,743 | 532,90 |
| 8 | շուկա | ցեմենտի արժեքը | տոն | 2,3712 | 49,947 | 118,43 |
| 9 | 5-111 | ճեմուղու ծածկույթ մոխրագույն բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ g/ա շաղախով | մ$^2$ | 395,19 | 6,263 | 2475,27 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10 | 5-111 | ծեմուղու ծածկույթ գունավոր բետոնե սալիկներով 50մմ , կարերի լցմամբ ց/ա շաղախով | մ$^2$ | 395,19 | 6,788 | 2682,53 |
| 11 | շուկա | կարերի ց/ա շաղախ | մ$^3$ | 4,74 | 39,559 | 187,51 |
| 12 | 11.ноя | սալիկների եզրագծի կառուցում B -12.5 մակնիշի շաղախով | մ$^3$ | 1,125 | 44,319 | 49,86 |
| | | *Ընդամենը* | | | | 118330,00 |
| | | *ԱԱՀ 20%* | | | | 23666,00 |
| | | *Ընդամենը* | | | | 141996,00 |

*Սալիկների գույնը և ձևը համաձայնեցնել Ալավերդու համայնքապետարանի հետ:*

* Կապալառուն աշխատանքները կատարում է –Ալավերդի համայնք-- հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ջորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
h/h 900262000707
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

---------------------------------
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Փայլք» ՍՊԸ
ք. Տաշիր, Վան 1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150020591901961
ՀՎՀՀ 06948686

---------------- Տ. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 17 » 08 2021թ. կնքված
**«ԼՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-21/1»** ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45211212 | Համայնքի Ալավերդի,Հաղպատ և Աքորի բնակավայրերի հենապատերի ու ճեմուղիների վերանորոգման աշխատանքներ | 0 | | | 0 | | | 70998000 | | | 141996000 | | | 141996000 |

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262000707
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

-----------------------------------
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Փայլք» ՍՊԸ
ք. Տաշիր, Վան 1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150020591901961
ՀՎՀՀ 06948686

------------------- Տ. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ

**Հավելված 6**
**«ԼՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-21/1»*  ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**
17.08.21թ.

1/ Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

ըստ «Քաղաքաշինական բնագավառ» հետևյալ ոլորտների՝

| Չափաբաժինների համարները | Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները). |
|---|---|
| 1 | 2 |
| 1 | «բնակելի,հասարակական և արտադրական» |

1. «Աշխատանքային ռեսուրսներ»

«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորումն ունեցող աշխատանքային ռեսուրսները - ինժեներ -շինարար, աշղեկ,պատշար,դեկորատիվ բետոնե սալիկապատողներ,բետոնագործ,հարդարողներ,բանվորներ

Ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր՝դիպլոմ,անձնագիր, համաձայնագիր

2. **«Տեխնիկական միջոցներ»** «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

Ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր
**Ինքնաթափ մեքենա,քանդող և բարձող մեխանիզմ, բետոնախառնիչ,բնահողի և ավազի տոփանման սարքեր**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Զորավար Անդրանիկի 8/1 | «Փայլք» ՍՊԸ |
| Ալավերդու համայնքապետարան | ք. Տաշիր, Վան 1 |
| ՀՀ ֆինանսների Նախարարության | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Գործառնական Վարչություն | Հ/Հ 1150020591901961 |
| h/h 900262000707 | ՀՎՀՀ 06948686 |
| ՀՎՀՀ 06954208 | |
| Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան | ---------------------- Ս. Արշակյան |
| -------------------------------- | /ստորագրություն/ |
| /ստորագրություն/ | Կ.Տ |

**Հավելված 5**
« 17 » 08 2021թ. կնքված
*ԼՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի*

*Համայնքի Ալավերդի,Հաղպատ և Աքորի բնակավայրերի հենապատերի ու ճեմուղիների վերանորոգման աշխատանքների ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ*

**ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ**

| N | ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ | Երաշխիքային ժամկետ |
|---|---|---|
| 1 | Բետոն B-7.5 | 5տարի |
| 2 | Բետոն B-12.5 | 5 տարի |
| 3 | Բետոն B-15 | 6տարի |
| 4 | Բետոնե մոխրագույն սալիկներ | 10 տարի |
| 5 | Բետոնե գունավոր սալիկներ | 10 տարի |
| 6 | <<Քրքատաշ>> շարվածքի բազալտ քար | 10 տարի |
| 7 | Հավաքովի բետոնե եզրաքար 200*60մմ | 5 տարի |
| 8 | Բետոնե աստիճանների տեղադրում բետոնե հիմքի վրա /1100*310*170/ | 10 տարի |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262000707
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար Ա. Խեչումյան

-------------------------------
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Փայլք» ՍՊԸ
ք. Տաշիր, Վան 1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150020591901961
ՀՎՀՀ 06948686

---------------- Տ. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ

**Հավելված 5.1**
*« 17 » 08 2021թ. կնքված*
*ԼՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի*

**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ**

| N | ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ | Երաշխիքային ժամկետ |
|---|---|---|
| 1 | Համայնքի Ալավերդի,Հաղպատ և Աքորի բնակավայրերի հենապատերի ու ճեմուղիների վերանորոգման աշխատանքների | 5 տարի |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
h/h 900262000707
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ա.Խեչումյան

------------------------------
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Փայլք» ՍՊԸ
ք. Տաշիր, Վան 1
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150020591901961
ՀՎՀՀ 06948686

---------------- Տ. Արշակյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*«      »      20   թ. կնքված*
*«ԼՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
*«Համայնքի Ալավերդի,Հաղպատ և Աքորի բնակավայրերի հենապատերի ու ճեմուղիների վերանորոգման »* **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | *Համայնքի Ալավերդի,Հաղպատ և Աքորի բնակավայրերի հենապատերի ու ճեմուղիների վերանորոգման աշխապանքներ* | Օգոստոսի 23-ից | 120 օր |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262000707
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար Ս.Խեչումյան
-----------------------------------
/ստորագրություն/

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
Ք.Տաշիր,Վան 1
<<Փայլք>> ՍՊԸ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
հ/հ 1150020591901961
ՀՎՀՀ 06948686
Տնօրեն՝ Տ.Արշակյան
-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ